# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

### ««ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԹԻՎ 10 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով, որ ««ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010թ. հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով դիմող կողմի ներկայացուցիչներ Վ. Գրիգորյանը եւ Վ. Հովսեփյանը ս.թ. ապրիլի 9-ին գործի դատաքննության փուլում, իրենց բացատրություններն ամբողջ ծավալով ներկայացնելուց հետո՝ մինչեւ պատասխանող կողմի բացատրությունները ներկայացնելը, հարցերին պատասխանելու փուլում հրաժարվեցին հետագա դատաքննության ընթացքում ներկայացնելու դիմողին, նկատի ունենալով, որ նման պայմաններում խոչընդոտվում է բանավոր ընթացակարգով գործի դատաքննության հետագա շարունակումը, հաշվի առնելով արդեն իսկ քննության նշանակված տարբեր գործերով սահմանադրական դատարանի ծանրաբեռնվածությունը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Ի փոփոխումն սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 27-ի ՍԴԱՈ-8 աշխատակարգային որոշման 4-րդ կետի, ««ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010թ. հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործի դատաքննությունը շարունակել գրավոր ընթացակարգով:
2. Գործի գրավոր ընթացակարգով դատաքննությունը շարունակել 2010 թվականի ապրիլի 23-ին, ժամը 11.00-ին:
3. Պահանջել ««ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» ՀՀ թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2010թ. հունվարի 14-ի թիվ 17-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործով դիմող կողմից եւ պատասխանողներից մինչեւ 2010թ. ապրիլի 16-ը սահմանադրական դատարանին ներկայացնել իրենց գրավոր բացատրությունները (կամ լրացումները)՝ քննության առարկա դիմումի վերաբերյալ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

9 ապրիլի 2010 թվականի
ՍԴԱՈ -39